Իսկ յորժամ հաստատեցին զերեսս իւրեանց դառնալ յարքայարանս, զի եղեն նշանք այսպիսիք, որ ի Լուսաւորչի տօնին առ յՈւրբաթ օրն լինէր հուր հրդեհիչ ի պաղատն արքունական առ ի կացք վալիտին, որով բազում ընչից չքումն լինէր։ Իսկ յետ աւուրց Ը-ից ի նոյնում աւուր լինէր ի դարպասն մեծ, որ ասի Դատբրդաիլիմանի՝ ի միջոյ նորա, զոր հաղիւ մարեցին։ Յետ աւուրց Ը-ից՝ մեծի Զչի լինէր ի վերայ բլրին Ճիհանկիր փաշայ կամ Այվազ փաշայ կոչեցելոյ սաստիկ հրդեհմամբ։ ԺԲ աւուրբ յառաջ եկն ի Տաւուրթ փաշայ վալիտէն. և արքայն յաւուր Զատկէ Կիրակէի եմուտ հանդերձ ամենեքումբք և նոյն պահու անց յՈւսկիւտարն ի Զամլուճայ և կայր անյագ շրջագայութեամբ արտաքոյ քաղաքիս ի յորս, և մուտ բնաւին չկամէր ի քաղաքս առ ի գահոյս իւր։

Եւ յաւուրս Զատկաց ելին միանգամայն զօրք և զօրագլուխք ամենայն բանակօք յէտրէնու և եկեալ մտին ի քաղաքս յաւուր Զատկէ Կիրակէի, որ էր Մարտի ամիս Լ, ընդ արքայիւն իւրեանց։ Եւ ի նոյն աւուրս փոխեաց զղափուտանն և եդ ի տեղի նորա զեկեալն յԱմթայ զառաջին սիլիհտար թագաւորի Մուստաֆայ։ Եւ յետ աւուրց՝ իբրև աւուրց ութից՝ այգուցն Նոր Կիրակէի (6 Ապրէլ) կնքեաց տէֆտէրտարն զդրունս նորաշէն եկեղեցեացն և եբաց՝, և կամէր զի լռելեան նոր իմն բան հոգալ և դրամ ինչ ուտել և թողուլ, բայց զի ոչ կարաց և յոյժ աղճատեալ էր ի լեզուս բռնակալաց անդէն յէտրէնէ. եւ աստանօր այսպէս պատճառ ինչ ասացին, նախ՝ զի փաթրիկն մեր ի դուրս նոցա ասէր թէ Հաց չեն տալ ինձ և ոչ համարին զիս իւրեանց մեծաւոր, զեկեղեցիքն իւրեանք ունին, չինեալքն իմով գիտութեամբ չէ և եղէ ես անճարակ։ Եւ զայս ընկալ դու Բ պատճառ, մէկ զի յորժամ զայմախամ եղեւ մէկ ըստակ փէշքէշ եւ ընծայ ոչ